,Նոր ժամանակի կրթություն ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ : Սովորողների քննադատական մտածողության զարգացումը առարկայի ուսուցման գործընթացում

Առարկան՝ Մաթեմատիկա

Հետազոտող ուսուցիչ՝ Ռուբինա Միրզախանյան

Ուսումնական հաստատություն՝ Արարատի մարզ, Մասիս ք. Մ.Մաշտոցի անվան №1 հիմնական դպրոց

Երևան 2022

Հետազոտական աշխատանք

Թեման: ***Սովորողների քննադատական մտածողության զարգացումը առարկայի ուսուցման գործընթացում***

Հարցը: Ինչ է քննադատական մտածողությունը և ինչ մեթոդներով է հնարավոր սովորողների մոտ զարգացնել քննադատական մտածողություն,

Կազմող՝ Ռուբինա Միրզախանյան

Արարատի մարզի Մասիս քաղաքի Մ.Մաշտոցի անվան № 1 հիմնական դպրոց

Բովանդակություն

Ներածություն----------3

Գլուխ 1. Քննադատական մտածողության տեսությունը ----------4

Գլուխ 2.- Բլումի տաքսոնոմիան որպես քննադատական մտածողության զարգացման հիմք ----------9

Գլուխ 3.- Քննադատական մտածողություն զարգացնող մեթոդները առարկայի ուսուցման գործընթացում ----------11

Գլուխ 4. Եզրակացություն----------15

Օգտագործված գրականության ցանկ----------17

Ներածություն

Հասարակական կյանքի տեղաշարժերի արդի ժամանակաշրջանում աշակերտը գիտելիքներ մտապահողից ու վերարտադրողից, այսինքն՝ ուսուցման օբյեկտից, վերաճում է ուսուցման գործընթացի գործուն մասնակցի՝ ուսուցման սուբյեկտի, ինքնուրույն որոշումներ կայացնողի: Իսկ դա էլ կյանքի հրամայական պահանջն է:

Ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների օգտագործումը պահանջներ է ներկայացնում ուսուցչին: Նա պետք է դառնա ոչ թե ուսումնական գործընթացի թելադրողը, այլ լինի ուղղորդողի, օգնականի, խթանողի, մասնակցի դերում և հնարավորություն ընձեռի աշակերտներին՝ խորհելու և անկաշկանդ ինքնարտահայտվելու:

Դպրոց մուտք գործող նորարարական մանկավարժական տեխնոլոգիաների թվին է պատկանում քննադական մտածողության զարգացման տեսությունը:

,Քննադատական մտածողությունե եզրույթն առաջին հայացքից բացասական երանգ է պարունակում, քանզի այն զուգորդվում է ,քննադատելե բառին: Սակայն այս բառը ներառում է ,քննելե և ,դատելե բառհասկացությունները: Այսինքն, իմաստն է՝ որևէ հարց քննել, զննել տարբեր տեսանկյուններից, ապա դատել և եզրահանգում կատարել:

Քննադատական մտածողության խթանման բազմաթիվ մեթոդներից յուրաքանչյուրի արդյունավետ կիրառումը դասարանում ենթադրում է փոխադարձ վստահության մթնոլորտի առկայություն: Յուրաքանչյուր երեխա պետք է լինի ազատ ու անկաշկանդ, կարողանա մտածել, ներկայացնել իր

տեսակետը, մտքեր փոխանակել ու լսել դիմացինին, հաղորդակցվել և յուրաքանչյուր դասին ունենալ իր՝ թեկուզ փոքրիկ ներդրումը:

Քննադատական մտածողության մեթոդների կիրառմամբ ընթացող դասերի ժամանակ աշակերտներն ընդգրկվում են դասապրոցեսի մեջ' մինչև նոր նյութի հաղորդումը (խթանում), նյութի մատուցման ընթացքում (իմաստի ընկալում) և նյութը յուրացնելուց հետո (կշռադատում): Այս համակարգը հայտնի է որպես ԽԻԿ /հապավումով/ համակարգ:

Քննադատական մտածողության տեխնոլոգիայի կիրառումը նպաստում է ոչ միայն ուսման արդյունավետության բարձրացմանը, այլև յուրացվող գիտելիքները դարձնում է կիրառելի, օժանդակում ինքնուրույն գիտելիքներ ձեռք բերելու կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը, խթանում սովորողների ստեղծագործական մտածողությունը:

Գլուխ 1. Քննադատական մտածողության տեսությունը

Ռոբերտ Էննիսը, ով հանդիսանում է քննադատական մտածողության առաջատար մասնագետներից մեկը, քննադատական մտածողությունը սահմանում է, որպես ,ողջամիտ և ռեֆլեկտիվ մտածողություն, որը միտված է որոշելու ինչին հավատալ կամ ինչ անելե (Ennis, 1989): Մեկ այլ աշխատության մեջ Էննիսը նշում է, որ քննադատաբար մտածելու նպատակն է գտնել ճշմարտությունը, կամ ճշմարտությանը ամենամոտ գտնվող պատասխանը (Ennis, 2008): Սակայն սա ամենևին չի նշանակում, որ խնդրի շուրջ քննադատաբար մտածելու արդյունքում կբացահայտվի ճշմարտությունը: Հետևաբար, ընկալումը, թե որն է ճշմարտություն,

մեծապես կախված է մտածողի նախապաշարմունքից և հմտություններից: Դեռևս 1962թ. նույն Ռոբերտ Էննիսը սահմանել է, որ քննադատական մտածողությունը՝ տարբեր պնդումների ճիշտ գնահատումն է (Ennis, 1962): Սակայն ինչպես տեսնում ենք, այս սահմանումը շատ լայն է պրակտիկ կիրառման համար: Առավել ընդգրկուն և մանրամասն սահմանում են ներկայացրել Միքայել Սկրիվենը և 11 Ռիչարդ Փոլը: Նրանք նշում են, որ քննադատական մտածողությունը դա դիտարկման, փորձի, դատողության, պատճառաբանության և/կամ հաղորդակցության միջոցով հավաքած ինֆորմացիան ակտիվորեն և հմտորեն համակարգելու, կիրառելու, վերլուծելու, սինթեզելու և գնահատելու մտավոր գործընթաց է, որը ծառայում է որպես ուղեցույց անհատի համոզմունքների ձևավորման և գործողությունների համար (Scriven & Paul, 1987):

Քննադատական մտածողության մեկ այլ ականավոր մասնագետ Էդուարդ Գլասերը հակիրճ սահմանել է, թե որն է քննադատաբար մտածելու կարողությունը: Ըստ նրա, այն ունի երեք բաղկացուցիչ մաս. առաջինը դա անհատի կյանքի և գործունեության ընթացքում հանդիպած խնդիրները մտածված ձևով քննարկելու վարքագիծն է; երկրորդը՝ տրամաբանական հետաքննության (logical inquiry) և հիմնավորման/ պատճառաբանման (reasoning) մեթոդների իմացությունն է; և վերջապես երրորդը՝ վերոնշյալ մեթոդները կիրառելու հմտությունն է: Նշենք, որ Գլասերի այս սահմանումն ընկած է նաև հետազոտության՝ ‘քննադատաբար մտածելու կարողություն’ փոփոխականի (variable) աշխատանքային սահմանման հիմքում:

Գրեթե բոլոր ականավոր հեղինակները համակարծիք են, որ քննադատական մտածողության ձևավորմանը միանշանակ նպաստում է դասավանդման ինտերակտիվ մեթոդների կիրառումը: Երբ սովորողն ակտիվորեն մասնակցում է ուսումնառության գործընթացին, նա ակամա

սկսում է մտածել խնդրի շուրջ, ուսուցչից բացի լսում է իր համադասարանցիների կարծիքը և տալիս է իր պատճառաբանված համաձայնությունը կամ անհամաձայնությունը բարձրաձայնված կարծիքների վերաբերյալ, ինչպես նաև կարող է ներկայացնել ամբողջովին տարբերվող տեսակետ, որը նույպես պետք է պատճառաբանված լինի, քանզի լսարանն ընդհանրապես ճնշում է գործադրում անհիմն կարծիքների վրա: Քալգարի համալսարանի պրոֆեսոր Ռանդի Գարիսոնը քննադատական մտածողության ուսուցանումն այնքան է կարևորում, որ ըստ նրա դա հանդիսանում է մեծահասակների կրթության հիմնական ֆունկցիան և գլխավոր հատկանիշը (Garrison, 1991): Նա իր աշխատության մեջ, հղում կատարելով Բրուքֆիլդին, նշում է, որ քննադատական մտածողությանը հատուկ է երկու գործողություն՝ ենթադրությունները վերհանելը և վիճարկելը, ինչպես նաև այլընտրանքներն ուսումնասիրելը և պատկերացնելը: Գարիսոնն ուսումնասիրելով քննադատական մտածողության վերաբերյալ բազմաթիվ հեղինակների կարծիքները, նշել է, որ հաճախ հանդիպում են հեղինակներ, ովքեր մեր պատկերացրած քննադատական մտածողությանն անվանում են ռեֆլեկտիվ մտածողություն: Օրինակ Դեուեյը առանձնացրել է ռեֆլեկտիվ մտածողության հինգ փուլ (Garrison, 1991): Ըստ նրա առաջինն այն է, որ մարդու միտքը վազում է առաջ՝ գտնելու խնդրի հնարավոր 13 լուծումներ, այնուհետև մտավոր հասունության մակարդակի է բերվում խնդրի՝լուծում պահանջող բարդ հատվածները, այսինքն ձևակերպվում է այն հարցը, որին պետք է պատասխան տալ: Երրորդ փուլում մեկը մյուսի հետևից, որպես առաջնորդող գաղափար կամ հիպոթեզ քննարկվում կամ հաշվի են առնվում տարբեր առաջարկություններ, որոնք ուղղորդում են փաստերի հավաքման գործընթացը: Չորրորդ և հինգերորդ փուլերում փորձ է արվում զարգացնել և

հիմնավորել հիմնական վարկածը և վերջում երևակայական գործողությամբ փորձարկել այդ հիպոթեզը (Garrison, 1991):

Գարիսոնն իր հետազոտության մեջ մշակել է հինգ փուլից բաղկացած մի մոդել և ընդգծել է, որ քննադատաբար մտածելու պայմաններում անհատի մտածողությունն անցնում է բոլոր այդ փուլերով: Գարիսոնի հինգ փուլերն են – խնդրի նույնականացում, խնդրի սահմանում, ուսումնասիրում, կիրառում, և ինտեգրում: Առաջին փուլում մտածողությունը դեռ փորձում է վերհանել և ճանաչել խնդիրը, իսկ արդեն երկրորդ փուլում մտածողությունը դառնում է ուղղորդված և նպատակային: Ճանաչման փուլին հաջորդում է խնդրի գնահատումը և նրա հստակ բնույթի ընկալումը: Երկրոդր փուլում խնդիրը կարելի է սահմանել և՛ անհատապես, և՛ խմբային քննարկումների միջոցով: Սովորաբար խմբային քննարկումները նպաստում են, որ անհատն առավել հստակ հասկանա խնդիրը և մտածի այլընտրանքային հնարավոր մոտեցումների մասին: Ուսումնասիրման փուլի ժամանակ փորձ է արվում բացատրել և հիմնավորել խնդրի լուծման համար առաջ քաշվող հիմնական գաղափարները: Իրականում, այս փուլում, երբ խնդիրը ընկալում ենք որևէ համատեքստում և ունենք հիմնավորման համար բավարար փաստեր, բավականին դժվար է տարբերակել, թե որտեղից են ձևավորվում մեր մտքերն ու գաղափարները (Garrison, 1991): Այս երրորդ փուլում արդեն ի հայտ են գալիս ինքնուրույն մտածելու և գնահատելու գլխավոր տարրերը: Չորրորդ փուլում մտածողությունը աբստրակցիայի միջոցով փորձում է հասկանալ և գուցե գնահատել խնդրի լուծման կիրառելիությունը, իսկ հինգերորդ փուլում լուծումը փորձարկվում է և դրանով վերադարձ է կատարվում դեպի իրականություն: Ներկայացնելով քննադատական մտածողության իր մոդելը, Գարիսոնն ընդգծում է, որ շատ կարևոր է մտածողության հատկապես վերջին փուլը: Նա նշում է, որ եթե

քննադատական մտածողության նպատակը գիտելիքի ձեռքբերումն է, ապա այդ գիտելիքի կիրառումն ու ինտեգրումը խիստ կարևոր է (Garrison, 1991): Գարիսոնը խիստ կարևորում է ուսուցչի դերը քննադատական մտածողության զարգացման գործում: Նա նշում է, որ ուսուցիչը պարտավոր է ուսանողին քննարկումների միջոցով դրդել վրճարկելու տարբեր գաղափարներ, ենթադրություններ, տեսություններ, նորմեր և կանոններ, քանի որ քննադատական մտածողությունը սովորողից պահանջում է ստաձնել գաղափարներ ու խնդիրներ քննելու և հետևություններ անելու պատասխանատվություն (Garrison, 1991:Կան մշակույթներ, որտեղ ուսուցիչն ուղղորդում է ուսանողին խոր գիտելիքների ձեռքբերման գործում և չի մղում նրան կրիառել այդ գիտելիքը, իսկ արևմտյան մշակույթն առավել հակված է քաջալերել ուսանողին առավելապես շատ ժամանակ հատկացնել ինքնուրույն աշխատանքի իրականացմանը (Gray, 2011):

Ռոբերտ Էննիսը, ում մասին արդեն խոսել ենք, իր՝ ‘Քննադատական մտածողության գնահատումը’ հոդվածում նշում է, որ քննադատաբար մտածելու ժամանակ անհատը, որպես կանոն, իրականացնում է հետևյան քայլերը. գնահատում է ինֆորմացիայի աղբյուրի հավաստիությունը; վեր է հանում եզրակացությունները, պատճառները և ենթարդությունները; գնահատում է փաստարկի որակը՝ հաշվի առնելով ներկայազված հիմնավորումները, ենթադրություններն ու վկայությունները; մշակում և պաշտպանում է խնդրի նկատմամբ սեփական դիրքորոշումը; հարցերի միջոցով հստակեցնում է խնդիրը; փորձարկում է սեփական դիրքորոշումը; եթե անհրաժեշտ է, սահմանում է համապատասխան եզրույթները; լինում է լայնամիտ և տեղեկացված, ինչպես նաև, երբ արդեն վստահ է իր տեսակետի մեջ, զգուշավորությամբ, բայց կատարում եզրահանգումներ (Ennis, 1993): Էննիսի մատնանշած վերոնշյալ քայլերը կարող են ծառայել ամենատարբեր

նպատակներին, այդ թվում կարող են հիմք հանդիսանալ քննադատական մտածողությունը չափող թեստ կազմելու, ուսումնական պլան կամ քննադատական մտածողություն զարգացնող հատուկ առարկա մշակելու, և այլ նպատակներով: Չերի Փերքինսը և Էլիզաբեթ Մըրֆին 2006թ.-ին իրականացրել են մի հետազոտություն, որի նպատակն էր մշակել մոդել որի միջոցով հնարավոր կլիներ հասկանալ և չափել քննարկումների ժամանակ ուսանողների քննադատական մտածողության դրսևորումը: Միավորելով Էննիսի, Գարիսոնի և այլոց մոդելները՝ հեղինակները մշակեցին չորս կատեգորիայից բաղկացած մի մոդել: Այդ կատեգորիաներն են՝ պարզաբանում , երբ քննարկվում են խնդրի սահմանման, պարզաբանման, նկարագրության բոլոր կողմերը; գնահատում, որի ընթացքում ծավալվում է բանավեճ և գնահատվում են այդ բանավեճի որոշ կողմեր, իրավիճակի վերաբերյալ հետևություններ են արվում, ներկայացվում են առաջ քաշվող փաստարկի հիմնավորումները կամ կապն այլ խնդիրների հետ; հետևության կառուցում, որը ենթադրում է ցույց տալ գաղափարների միջև գոյություն ունեցող կապերը, ինչպես նաև դեդուկցիայի կամ ինդուկցիայի միջոցով համապատասխան եզրահանգումներ կատարել; և վերջապես ռազմավարության մշակում, երբ 16 առաջարկվում, քննարկվում և գնահատվում են հնարավոր գործողությունները (Perkins & Murphy, 2006): Յուրաքանչյուր կատեգորիա ունի իր ինդիկատորները, որոնք սահմանված են աճման կարգով: Հեղինակների կարծիքով այս մոդելը կարելի է կիրառել ինչպես ուսանողների գնահատման, այնպես էլ առարկայական ծրագրերի մշակման համար, եթե կա նպատակ զարգացնելու ուսանողի քննադատական մտածողությունը:

Ինչպես արդեն նշել ենք, քննադատական մտածողության զարգացման համար կարևոր են և' դասավանդման մեթոդները, և'

դասավանդվող առարկաները: Այս եզրահանգումն է արել նաև Ամերիկայի Օդային Հրամանատարության և Աշխատակազմի քոլեջի հետազոտող մայոր Լինդոն Մքոունը: Նա փորձել է հասկանալ, թե արդյոք քննադատական մտածողությունը պետք է դասավանդվի, որպես ընդհանուր, փոխանցելի հմտությունների միասնություն, թե որպես հմտությունների առանձին խմբեր՝ յուրաքանչյուրը ներհատուկ որևէ ակադեմիական առարկայի (Major McKown, 1997): Հարկ է նշել, որ քննադատական մտածողության շատ մասնագետներ վիճում են այս հարցի շուրջ, և չկա մեկ ընդհանուր տեսակետ: Մքոուն նույպես միանշանակ պատասխան չի տալիս իր հետազոտության արդյունքում, սակայն հստակ է, որ մեկ առարկայի շրջանակներում զարգացրած հմտությունների խումբը բավարար չէ այլ խնդիրներ քննարկելիս քննադատական մտածողություն դրսևորելու առումով: Կարելի է պնդել նաև այն, որ քննադատական մտածողության համար անհրաժեշտ հմտությունները հնարավոր չէ կիրառել առանց խնդրո առարկայի վերաբերյալ նախնական գիտելիքի: Ուստի քննադատական մտածողության ձևավորումն ու զարգացումը պետք է լինի և՛ առարկայական ծրագրի, և՛ ուսումնական պլանի զարգացման հիմքում: Վերադառնալով դասավանդման մեթոդիկային՝ Անուրադհա Գոքհեյլը ուսումնասիրել է, թե արդյոք քննադատական մտածողության հմտությունների ձեռքբերումը կախված է դասավանդման և սովորելու մեթոդից: Նա առանձնացրել է սովորելու երկու՝ անհատական և համագործակցային մեթոդ (individule and collaborative methods): Հետազոտության արդյունքում Գոքհեյլը պարզել է, որ այն ուսանողները, ովքեր մասնակցել են լսարանային քննարկումներին, խմբային աշխատանքներին, այսինքն նյութի համատեղ յուրացման գործողություններին, ի տարբերություն մյուսների, զգալիորեն լավ ցուցանիշ են դրսևորել քննադատական մտածողությունը չափող թեստերը լրացնելիս

(Gokhale, 1995): Փաստորեն հետազոտությունը ցույց տվեց, որ սովորելու համագործակցային մեթոդը ուսանողներին առավել լայն հնարավորություն է տալիս ուսանողներին գաղափարները վերլուծելու, սինթեզելու և գնահատելու: 17 Մեր հետազոտության տեսանկյունից բավական հետաքրքիր է Ռոբերտ Դուրոնի հոդվածը, որտեղ հեղինակը ներկայացնում է մի մոդել, ըստ որի քննադատական մտածողություն հնարավոր է զարգացնել ցանկացալ առարկայի շրջանակներում: Չնայած այն հանգամանքի, որ դասախոսություններ կարդալու ձևաչափը նյութի ներկայացման ամենատարածված մոտեցումն է բարձրագույն կրթության բնագավառում, Դուրոնն ընդգծում է, որ այդ մոտեցումը բացարձակ չի խթանում քննադատական մտածողության զարգացումը (Duron, 2006): Վերջինիս համար համար, ինչպես արդեն բազմիցս նշել ենք, խիստ նպաստավոր են դասավանդման ինտերակտիվ մեթոդները:

Գլուխ 2. Բլումի տաքսոնոմիան որպես քննադատական մտածողության զարգացման հիմք

Երբ ուսումնասիրում ենք քննադատական մտածողության ձևավորման և զարգացման համար գրականությում գոյություն ունեցող մոդելները, ակնհայտ է դառնում, որ բոլոր այդ մոդելները շատ կամ քիչ

չափով հիմնվում են դեռևս 1956թ. ականավոր գիտնական Բենջամին Բլումի կողմից մշակված տաքսոնոմիայի վրա: Բլումի տաքսոնոմիայի ճանաչողական կամ, այսպես կոչված, իմացական խումբը բաղկացած է վեց մակարդակներից – գիտելիք, ընկալում, կիրառում, վերլուծություն, սինթեզ, և գնահատում: Գիտելիքի ձեռքբերման մակարդակում սովորողը կարող է հիշել, տարբերակել, մտաբերել կամ գտնել ուսուցման ընթացքում ներկայացված յուրահատուկ տեղեկատվությունը: Այն կարող է դրսևորվել փաստերի, կանոնների, դիագրամաների, ձայնի և այլնի միջոցով: Ընկալման մակարդակում սովորողը կարող է ցույց տալ, որ հասկացել է տեղեկությունը՝ վերափոխելով այն տարբեր ձևերի կամ ճանաչել դրա վերափոխված տարբերակը:Այն կարող է իրականացվել սովորողի կողմից բառերով բացատրության, ամփոփման, օրինակ բերելու և այլ ձևերով: Տաքսոնոմիայի կրրառման մակարդակում սովորողը կարող տեղեկատվությունը կիրառել՝ այն օգտագործելով կոնկրետ գործողության մեջ: Այդ գործողությունները կարող են լինել հաշվելը, գրելը, կարդալը, սարքավորումներ օգտագործելը և այլն: Չորրորդ մակարդակում, որը ենթադրում է վերլուծություն, սովորողը կարող ճանաչել տեղեկատվության հիմնական կազմվածքն ու կառուցվածքը, տրոհել բաղկացուցիչ մասերի և որոշել դրանց միջև առկա կապերը: Սովորողը կարող տարբերել փաստերը ենթադրություններից: Բլումի տաքսոնոմիայի հինգերորդ մակարդակը վերաբերում է սինթեզին: Այս մակարդակում սովորողը կարող տեղեկատվություն ստանալ տարբեր աղբյուրներից՝ իր անհատական նյութը, տեսակետը, դիրքորոշքումը ձևավորելու նպատակով: ԵՎ վերջապես վերջին՝ գնահատման մակարդակում սովորողը կարող որոշակի չափորոշիչներ կիրառել՝ օբյեկտի վերաբերյալ եզրահանգումներ անելու համար: 18 Վերոնշյալ բոլոր վեց մակարդակներում էլ ուսանողներին անհրաժեշտ են համապատասխան

հմտություններ, սակայն քննադատական մտածողության ձևավորման և զարգացման տեսանկյունից պետք է առավելապես շեշտել վերլուծության, սինթեզի և գնահատման մակարդակները: Բլումի տասքոնոմիայի մակարդակները դասավորված են աճման կարգով, այսինքն նախորդ մակարդակը հաջորդի հիմքն է, սակայն քննադատական մտածողության համար անհրաժեշտ են այն հմտությունները, որոնք ձևավորվում են վերջին երեք մակարդակներում: Պետք է նշել, որ վերլուծելով Բլումի Տաքսոնոմիան առավել հստակ է դառնում մասնագետների շրջանում առկա այն վեճը, թե արդյոք քննադատական մտածողությունը համընդհանուր հմտություն է, թե սահմանափակվում է մեկ ակադեմիական առարկայի շրջանակներում: Տաքսոնոմիայի առաջին երեք մակարդակները՝ գիտելիք, ընկալում, և կիրառում, առավել հատուկ են ակադեմիական առարկային, իսկ հմտությունները, որոնցով պայմանավորված են վերլուծությունը, սինթեզը և գնահատումը, ընդհանուր են և չեն կարող սահմանափակվել մեկ առարկայով: Սա նշանակում է, որ եթե քննարկում է ծավալվում որևէ խնդրի շուրջ, անհատը, որը ցանկություն ունի մասնակցելու այդ քննարկմանը, պետք է նախ ունենա համապատասխան գիտելիք տվյալ խնդրի մասին և ընկալի խնդիրը, որն իր հերթին հիմք կծառայի քննադատական մտածողության հմտությունների կիրառման համար:

Գլուխ 3. Քննադատական մտածողություն զարգացնող մեթոդները առարկայի ուսուցման գործընթացում

Ինչ մեթոդներով է հնարավոր հասնել սովորողների քննադատական մտածողության զարգացմանը:

Մեթոդը թարգմանաբար նշանակում է ուղի, ճանապարհ;'' Մեթոդը փոխազդեցության, , փոխգործողության եղանակ է, ուսուցչի և աշակերտի աշխատանքների առանձնահատկությունների արտահայտությունն ուսուցման գործընթացում''/2,էջ157-158/:

Քննադատական մտածողության մեթոդները առավել ընդգրկուն են, իրենց մեջ ներառում են ուսուցման գործընթացի մի քանի մեթոդներ, սակայն դրանք ինքնուրույն և ամբողջական են, ունեն նպատակների և կիրառման հստակություն, քայլերի հերթականություն, դիդակտիկական միջոցների կիրառելիություն, դիագնոստիկ ֆունկցիա ևուղղված է կոնկրետ խնդիրների ու հարցերի լուծմանը:

Մանկավարժության մեջ հայտնի են քննադատական մտածողության բազմաթիվ մեթոդներ, որոնք մինչ օրս համալրվում, զարգանում ու կատարելագործվում են: Գործնականում կիրառելի բազմաթիվ մեթոդների մի մասը այսօր օգտագործվում է կենդանի մանկավարժական գործընթացում: Մեթոդների մյուս մասը ավելի քիչ է կիրառվում կամ պարզապես մոռացվել է: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ, օրինակ՝ Մտավոր գրոհը, Քառաբաժանումը, Վեննի դիագրամը և այլն, լայն տարածում են գտել, իսկ, ասենք՝ Հետազոտության ուղնիշներ, Շրջագայություն պատկերասրահում, կողային մատյաններ և մի շարք այլ մեթոդներ համարյա չեն կիրառվում:

Քննադատական մտածողություն զարգացնող մեթոդները , կիրառման մեջ ունենալով որոշակի առանձնահատկություններ, տարբերություններ, հիմնականում հետապնդում են ընդհանուր նպատակ՝ գիտելիքների յուրացում, կարողությունների, հմտությունների ձևավորում, աշակերտների ակտիվության և ինքնուրույնության ապահովում, քննադատական և ստեղծագործական մտածողության, ճանաչողական ու տրամաբանական

կարողությունների, հաղորդակցական և համագործակցային կարողությունների խթանում ու զարգացում, ինչպես նաև սովորողների արժեքային համակարգի ձևավորում՝ նպաստելով ժամանակակից մանկավարժական խնդիրների արդյունավետ լուծմանը:

Քննադատական մտածողություն զարգացնող մեթոդները բազմաթիվ ու բազմապիսի են, որոնք կիրառելի են կրթության տարբեր մակարդակներում, հանրակրթական դպրոցի բոլոր աստիճաններում, տարբեր առարկաների ու տարբեր թեմաների ուսումնասիրության ժամանակ:

Առավելապես նախատեսված լինելով հանրակրթական դպրոցի միջին և բարձր դասարանների համար, քննադատական մտածողություն զարգացնող մեթոդները տարրական դպրոցում որոշ սահմանափակումներ են առաջացնում, քանի որ տարրական դպրոցը մեծապես տարբերվում է միջին և ավագ դպրոցից կրթության բովանդակությամբ, կազմակերպվող աշխատանքների յուրահատկություններով, սովորողների տարիքային առանձնահատկություններով: Տարրական դասարաններում այդ մեթոդները կարելի է կիրառել որոշակի փոփոխությունների դեպքում՝ ելնելով կառուցվածքի բարդությունից, ծավալուն լինելուց, կիրառման համար անհրաժեշտ որակների ու պայմանների բացակայությունից և այլ պատճառներից: Այնուամենայնիվ, առաջ եկող բարդություններով հանդերձ, սովորողների մոտ քննադատական մտածողություն պետք է զարգացնել սկսած տարրական դասարաններից, քանի որ երեխաների համատարած առաջընթաց զարգացումը, աքսելերացիայի երևույթը, մեզանից պահանջում են վերանայել մոտեցումները տարրական դպրոցի մանկավարժական գործընթացի կազմակերպման վերաբերյալ, իսկ հանրակրթական դպրոցի հիմքն ու հետագա կրթության մակարդակը դրվում է տարրական դպրոցում:

Մտածել. Հասկանալ, համեմատել, ճանաչել, համադրել և այլ կարողություններ, որոնք ձևավորվում են քննադատական մտածողության տեխնոլոգիայիկիրառման արդյունքում, երեխայի մեջ պետք է ձևավորվեն դեռևս ուսուցման առաջին աստիճանի ընթացքում: հատկապես, որ ձկրտսեր դպրոցականները ճկուն միտք ունեն, արագ են ընկալում, անմիջական են և անկաշկանդ, պատրաստակամորեն մասնակցում են բարդ խնդիրների լուծման գործընթացին՝ դրսևորելով որոշումներ կայացնելու կարողության բարձր մակարդակ:

Համաշխարհային մանկավարժության մեջ նախկինում փորձ էր արվում քննադատական մտածողություն զարգացնող մեթոդները դասակարգել ըստ ԽԻԿ համակարգի, այսինքն մեթոդներ, որոնք կիրառելի են խթանման փուլում, իմաստի ընկալաման կամ կշռադատման փուլերում: Սակայն նման դասակարգումը չի կարելի լիարժեք համարել, քանի որ բազմաթիվ մեթոդներ կարելի է կիրառել դասապրոցեսի տարբեր փուլերում:

Սովորողի մոտ քննադատական մտածողություն զարգացնող մեթոդները կարելի է դասակարգել՝ հիմք ընդունելով կրթության բովանդակային բաղադրիչները: Մեթոդներ, որոնք ուղղված են առավելապես տվյալ առարկայի ուսուցման ընթացքում գիտելիքների համակարգի ձևավորմանը, այս կամ այն կարողունակությունների ձևավորմանն ու զարգացմանը, ինչպես նաև արժեքային համակարգի ձևավորմանը:

Հաղորդակցական և համագործակցային կարողությունների և հմտությունների ձևավորմանն ու զարգացմանը, ինչպես նաև արժեքային համակարգի ձևավորմանը միտված մեթոդները կարող են կրկնվել, քանի որ նպաստում են նաև այլ՝ ճանաչողական, տրամաբանական, ստեղծագործական, ինքնուրույն գործունեության կարողությունների և

հմտությունների, ինչպես նաև արժեքային համակարգի ձևավորմանը, այսինքն միտված են մեկից ավելի խնդիրների լուծմանը:

Առարկայի ուսուցման գործընթացում գիտելիքների համակարգի ձևավորմանն ուղղված մեթոդներ են՝ Տեքստի նշագրում/Փոխգործուն նշաններ, Հարցադրումներով ուղղորդված ընթերցանություն, <<Հաստ>>, <<Բարակ>> հարցերի աղյուսակ, Մտավոր գրոհ, Խմբավորում:

Ճանաչողական, տրամաբանական կարողությունների և հմտությունների զարգացմանն ուղղված են հետևյալ մեթոդները՝Վեննի դիագրամ, Խորանարդում, Կենսագրական բանաստեղծություն, Խառնված հերթականություններ, Կրկնակի գրառումների օրագիր, Վերլուծության-համադրման աղյուսակ, Երեք մաս ունեցող օրագիր, Մանրապատում, Պրիզմա, Երեք բանալի և մեկ կողպեք, Երկու աստղ և մեկ ցանկություն, Կանխագուշակումների աղյուսակ, Քառաբաժանում, Թիրախ թիվ, Որն է թիվը, Զույգերով ընթերցում, Ջիգսո/խճանկար/:

Հաղորդակցական կարողությունների հմտությունների զարգացմանն ուղղված մեթոդներն են՝ հարցադրումներո և ուղղորդված ընթերցանություն, <<Հաստ>>, <<Բարակ>> հարցերի աղյուսակ, Հեղինակի աթոռ մեթոդները:

Համագործակցային կարողությունների և հմտությունների զարգացմանն ուղղված մեթոդներ են՝ Թիրախ թիվ, Որն է թիվը, Զույգերով ընթերցում, Զույգերով ամփոփում, Ջիգսո/խճանկար/, Գրավոր շրջանագիծ-Բանավոր շրջանագիծ, Խմբավորում, Մտագրոհ, Վեց գլխարկ մեթոդները:

Ստեղծագործական կարողությունների և հմտությունների զարգացմանն ուղղված մեթոդներ են՝ Հնգյակ, Բանալի բառեր, Աքրոստիկոս, 5-րոպեանոց շարադրանք, Գրավոր շրջանագիծ-Բանավոր շրջանագիծ,

Կանխագուշակումների աղյուսակ, Երկու աստղ և մեկ ցանկություն մեթոդները:

Ինքնուրույն գործունեության կարողությունների և հմտությունների զարգացմանն ուղղված մեթոդներ են՝ Ինքնագնահատման աղյուսակ՝ ԳՈՒՍ, Ռուբրիկ:

Արժեքային համակարգին նպաստում են՝ Ռուբրիկ, Վեց գլխարկ, Հղինակի աթոռ մեթոդները:

Քննադատական մտածողությունը զարգացնող մեթոդները հնարավորություն են տալիս սովորողին ոչ միայն ձեռք բերել խորը գիտելիքներ, այլև զարգացնում են նրանց ճանաչողական, հաղորդակցային, համագործակցային, ստեղծագործական կարողություններն ու հմտությունները, դառնալ առավել ակտիվ, ինքնուրույն, որի հիման վրա ձևավորվում է սովորողի արժեքային համակարգը:

Գլուխ 4. Եզրակացություն

Յուրաքանչյուր պետության համար կրթության բնագավառը հանդիսանում է պետության զարգացման գործում ռազմավարական նշանակություն և կարևորություն ունեցող ոլորտ, ուստի հաճախ պետության զարգացման հեռանկարները հասկանալու համար ուսումնասիրվում է տվյալ երկրի կրթական համակարգի ռազմավարությունը: Կրթության որակի ապահովումը, հենասյունային դեր իրականացնելով կրթության զարգացման

գործում, շեշտադրում է այն կրիտիկական կետերը, որոնցից բխելու է, թե ինչպիսի հասարակություն է ձևավորվելու գոյություն ունեցող կրթական համակարգի պայմաններում: Նշենք, որ, յուրաքանչյուր պետություն ազատ է սահմանելու այն նպատակը, որին միտված է տվյալ կրթական համակարգի որակի ապահովումը:

Ժամանակակից փոփոխվող աշխարհը, գիտատեխնիկական առաջընթացը, համաշխարհային զարգացումների դարաշրջանը, որը խորհրդանշվում է նոր գիտելիքների ինտենսիվ ստեղծմամբ, իր ազդեցությունն է ունենում նաև կրթության ոլորտի վրա: Արդի պայմաններում կրթության դերի վերափոխումն ու ոլորտի բարելավումը դառնում են անհրաժեշտություն: Այսօր կրթության դերն աճում է և այն ''վերաճում է մի գործոնի, որը նպաստում է հասարակության մեջ մարդու դերի առավել արժևորմանը՝ զարգացնելով համակեցության, հանդուրժողականության, համարժեքության և արժեքային որակներ'': [1,էջ7]

Այսօր անհրաժեշտ է, որ մարդ ունենա ոչ միայն գիտելիքների որոշակի պաշար, այլև կարողանա այդ գիտելիքները համապատասխանաբար կիրառել: Արդի հասարակության մեջ ապրող մարդուն անհրաժեշտ են հաղորդակցվելու, համագործակցելու, ուրիշի կարծիքը լսելու և գնահատելու, իր տեսակետը հիմնավորելու, ինքնուրույն դիրքորոշում ունենալու, իր որոշումները գնահատելու ու դրանց համար պատասխանատվություն կրելու կարողություններ ու հմտություններ: Վերը նշված որակների արդիականությունն ու կարևորությունը շեշտվում է ժամանակից մանկավարժ Տ.Պ. Սալնիկովայի կողմից. ''Կրթության առաջնային խնդիրը պիտի դառնա ոչ թե աշակերտների կողմից որոշակի գիտելիքների պաշարի, կարողությունների ու հմտությունների յուրացումը, այլ ինքնուույն սովորելու,

գիտելիքներ ձեռք բերելու ու այն վերամշակելու, կարևորը առանձնացնելու, դրանք հիշելու և իր իմացածի հետ կապ ստեղծելու աշակերտի կարողությունը'' [3 էջ 46-47]

Սովորողին գիտելիքներ հաղորդելու և համապատասխան կարողունակություններ մաշկելու դժվարին գործը դրված է հանրակրթության վրա: Ժամանակակից մանկավարժությունը գտնվում է որոնումների մեջ: Մշակվում և ներդրվում են բազմաթիվ նորագույն մեթոդներ, մշակվում են մանկավարժական տեխոլոգիաներ, ուսուցման կազմակերպման նոր ձևեր, որոնք ուղղված են մանկավարժության ժամանակակից խնդիրների լուծմանը: Այդ տեխնոլոգիաների շարքում իր ուրույն տեղն ունի քննադատական մտածողության զարգացումը սովորողների ուսուցման գործընթացում: Քննադատական մտածողությունը մարդու ինտելեկտուալ գործունեության տեսակ է, որը բնութագրվում է '' ընկալման, յուրացման, շրջապատող ինֆոմացիոն դաշտի նկատմամբ օբյեկտիվ մոտեցման բարձր մակարդակով[5, էջ 243]: Մանկավարժության բառարան-տեղեկատուն քննադատական մտածողությունը սահմանում է որպես ''ինֆորմացիան տրամաբանորեն վերլուծելու հիմնավորված դատողություններ, եզրակացություններ անելու և ստացված արդյունքները տարբեր պայմաններում և բազմազան խնդիրների լուծման ժամանակ կիրառելու կարոություն: Քննադատական մտածողությանը բնորոշ է նոր գաղափարներին բաց լինելը, ինչը ժամանակակից ուսուցման կարևոր խնդիրներից մեկն է'':[6, էջ168]

Քննադատական մտածողությունը երեխայի առողջ զարգացման համար ստեղծում է բնական, հարմար, նպաստավոր պայմաններ: Այս դեպքում ուսումնական գործընթացը կազմակերպվում է՝, ելնելով ամեն մի երեխայի

անձնական փորձից, նրա համար կարևորվող արժքների ուսումնասիրությունից: Տեսական գիտելիքներից բացի այն նպաստում է նաև առօրյայում հանդիպող դժվարությունների լուծմանը: Հաճախ սովորողները առաջ եկած խնդիրները փորձում են լուծել, ելնելով սեփական փորձից՝ վերլուծությունների, պատճառահետևանքային կապերի բացահայտման և եզրակացություններ անելու արդյունքում: Քննադատական մտածողության շնորհիվ երեխաները ներգրավվում են համատեղ աշխատանքների մեջ նպաստելով հղորդակցական և համագործակցային կարողությունների ձևավորմանը: Այստեղ կարևորվում է նաև սովորողների ստեղծագործական ունակությունների զարգացմանը, հետաքրքրություն է ցուցաբերվում ուսուցանվող նյութի նկատմամբ:

Գրականություն

1. ՀՀ ԿԳՄՍՆ Հանրակրթության պետական կրթակարգ. Երևան, Անտարես, 2004:
2. Յու. Ամիրջանյան, Ա.Ս.Սահակյան: Մանկավարժություն: Ուսումնական ձեռնարկ մանկավարժական բուհերի ուսանողների համար, Երևան, Մանկավարժ, 2005, էջ 456:
3. Педагогические технологии. Учеб.пособие. Авт-сост. Т.П.Сальникова. М.ТЦ Цфера,2007,с.128.
4. И.П.Подласый. Педагогика. В 2кн. М. Гуманит. Изд. Центр ВЛАДОЦ, 2002, Кн1,с.576.
5. Г.К.Селевко. Энциклопедия образовательных технологии.В 2т.,Т.1,М.,НИИ школьных технологий,2006,с.816.
6. Гловарь-справочник по педагогике, Авт.-сост. В.А. Мижериков. Под общ. Ред. П.И.Пидгасистого. М.ТЦ Сфера,2004, с.448.
7. Հ.Հայրունի: Տարրական դպրոցում ուսուցման արդյունավետությանը նպաստող գործոնները, Մանկավարժություն 2010,5,էջ 31
8. Ա.Զոհրաբյան:Ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաները որպես ուսուցման արդյունավետության բարձրացման միջոց, Մանկավարժություն 2010, 8, էջ 13: